

**ԱՐՑԱԽՑԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ.
ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՐՑԵՐ
ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

2020

Որպես ներածական. Մույն դիտարկումների հիմքում ՀՀ ԱՍՀՆ-ի, ինչպես նաև մարզպետարանների, համայնքապետարանների համապատասխան բաժինների կողմից տրված ցանկերում առկա կացարանների առաջնային գնահատման արդյունքներն են: Սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 17-ն ընկած ժամանակահատվածում իրականացվել է Արցախից ժամանած շուրջ 950 ընտանիքի գնահատում (տունայցի և հեռախոսային հարցումների միջոցով), ովքեր ապաստանված են հետևյալ մարզերում`

- Երևան,
- Կոտայք (Աբովյան, Ծաղկաձոր, Աղվերան, Բյուրեղավան, Եղվարդ, Մեղրաձոր),
- Տավուշ (Դիլիջան),
- Գեղարքունիք (Սևան),
- Վայոց ձոր (Զերմուկ, Վայք, Եղեգնաձոր, Եղեգիս),
- Սյունիք (Սիսիան):

Այցելելով կոնկրետ ընտանիքներին, համակողմանի գնահատվել են նրանց` ներկայումս առաջնային համարվող խնդիրները, ինչպես նաև ընդհանուր առմամբ, վեր են հանվել մեծ կացարաններին վերաբերող հարցերը, որտեղ ապաստանված են եղել 20 և ավելի թվով անձինք (նման կացարանների թիվը 35 է եղել, ցանկը` կից հավելվածով): Այսպիսով, տեղեկատվությունը հավաքված է շուրջ 250 ընտանիքի անմիջական և 700 ընտանիքի արագ գնահատումների միջոցով` միջնորդավորված ձևով:

Ապաստանված ընտանիքների ընդհանուր բնութագրիչները. *Ապաստանված ընտանիքները միջինում 4 անդամից բաղկացած ընտանիքներն են, որտեղ հիմնական տիպերն են` մայր և երեխաներ (60%) և խնամող-խնամվող (22%) կազմով ընտանիքները: Ուսումնասիրված ընտանիքները 33% դեպքերում բազմազավակ են, ունեն 3 և ավելի երեխաներ, ինչն էլ հիմնականում պայմանավորում է տեղահանված անձանց շարքում անչափահաս բնակչության գերակշռումը` 55%:*

Տեղահանվածների կազմում, ինչպես ի սկզբանե ենթադրվում էր, ամենափոքր մասնաբաժինն ունեն տղամարդիկ` 6%: Նրանք ֆիզիկական և/կամ հոգեկան առողջության խնդիրներով պայմանավորված հաշմանդամություն ունեցող և/կամ 60+ տարիքի անձինք են:

Տեղափոխված կանայք, երեխաներից հետո հաջորդ մեծ խումբն են` 39%, ովքեր 60% դեպքերում հանդես են գալիս որպես երեխաներին ուղեկցող մեծահասակ (90% դեպքերում մայրերը, իսկ մնացած դեպքերում` տատիկ, հորաքույր/մորաքույր): Կին բնակչության մյուսը մասը` 40%-ը, հանդես են գալիս ընտանիքի այլ անդամի (ոչ անչափահասի) խնամողի դերում կամ հենց իրենք խնամքի կարիք ունեցող տարեց են կամ հաշմանդամություն ունեցող անձ:

Ինչպես նշեցինք, մեծամասամբ երեխաները տեղափոխվել են մոր ուղեկցությամբ, սակայն հանդիպում են նաև տատիկի կամ այլ հարազատի ուղեկցությամբ տեղափոխումները: Մրանք հիմնականում ներառում են այն դեպքերը, երբ զինձատայողներ են երեխաների երկու ծնողները, կամ երկու ծնողն/ միակ ծնողները թիկունքում ներգրավված են/է կոնկրետ գործառույթների կատարման մեջ: Ուսումնասիրված բոլոր դեպքերի մեջ բացահայտվել է առանց ուղեկցման կամ ընտանիքից անջատված երեխաների 20 դեպք` 14 ընտանիքից: Ներկա պահին նշված դեպքերից` 3 ընտանիքից 6 երեխայի պարագայում երեխաների ծնողները գտնվում են ռազմական գործողությունների տարածքում և վերամիավորումը ներկա պահին

հնարավոր չէ, սակայն երեխաները ապաստանված են անվտանգ միջավայրում, գտնվում են պատկան մարմինների ուշադրության կենտրոնում և պահպանում են կապը ծնողների հետ: Մյուս դեպքերում երեխաները վերամիավորված են ծնողի կամ ընտանիքի այլ անդամի հետ և իրականացվում է ընթացիկ մոնիթորինգ:

Դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձնահատուկ կարիքներ ունի յուրաքանչյուր 5-րդ ընտանիքը կամ ուսումնասիրված ընտանիքների 20%-ը: Այդ կարիքները ներառում են՝ հոգեկան առողջության խնդիրները, խորը/բազմակի հաշմանդամությունը, քրոնիկ հիվանդությունները, կողմնակի աջակցության/խնամքի կարիքը, երեխաների բաժանումը ընտանիքներից, հղիությունը և նորածին ունենալը: Այս խմբի ընտանիքների թիվը միտում ունի մեծանալու, հաշվի առնելով ռազմական գործողությունների հետևանքով վիրավորների և գոհերի թվի աճը, հատկապես, երբ հաշվի ենք առնում այն, որ տեղափոխված ընտանիքների միայն 1%-ը չունի ընտանիքի անդամ ռազմական գործողությունների տարածքում:

Դուրս բերված քնդհանուր խնդիրներ և մտահոգություններ. Բացահայտված խնդիրներն ու մտահոգությունները դասակարգված են երեք հիմնական խմբերում՝

1. Կացարանների հետ կապված կազմակերպչական-տեխնիկական բնույթի հարցեր,
2. Ապաստանված ընտանիքներին մասնագիտական շարունակական աջակցության տրամադրմանն առնչվող հարցեր
3. Կամավորների և սոցիալական ոլորտի աշխատուժի հետ կապված հարցեր

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐ

Ապաստանման կարողության առնչությամբ. տևողություն, սնունդ, հիգենիկ պարագաներ և անձնակազմ

1.1 Տևողություն. Մեծամասամբ, կացարանները նշում էին, որ ևս մեկ ամիս կկարողանան ապահովել ընտանիքներին կացարաններով, սակայն ակնհայտ լարվածություն էր նկատվում՝ կապված սննդապահովման ռեսուրսների, հիգիենայի պարագաների և աշխատողների վճարման հետ:

Առկա են նաև ապաստանման տևողության հետ կապված նաև ընտանիքներում: Ի սկզբանե, ոչ հյուրընկալողները, ոչ էլ հյուրընկալվողները պատրաստ չեն եղել ապաստանման նման տևողության: Հարցազրույցների ընթացքում պարզ էր, որ ընտանիքները կարծել են, որ տևողությունը առավելագույնը կլինի մեկ շաբաթից մինչև տասը օր: Նման երկարաձգման արդյունքում երկու կողմից էլ նկատվում է ինչպես անհնազստություն, այնպես էլ անհարմարության զգացում: Հատկապես հյուրընկալվողները նշում էին, որ «ամաչում են այսքան շատ նեղություն պատճառելուց հյուրընկալող կողմին»: Հատկապես նկատի ունենալով, որ տեղափոխված ընտանիքների գրեթե 60%-ը երեխաներ ունեցող ընտանիքներ են, զգալի մասն են կազմում 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքները, իսկ 22%-ը լրացուցիչ խնամքի կարիք ունեցող անձինք:

Իրավիճակն առավել ռիսկային է հաշվի առնելով, որ բավականին շատ են անձանոթների տանը Ապաստանման դեպքերը: Ըստ այդմ, արդեն վերջին երկու շաբաթվա ընթացքում մեծացել են դիմումները վերատեղավորումների վերաբերյալ (Ըստ ԱՍՀՆ թեժ գծի տվյալների):

Ուշադրություն.!!! Ջերմուկում գտնվող «Անուշ» հյուրանոցը պատրաստվում է ապաստանվողներին պահել լավագույն դեպքում ևս մեկ շաբաթ՝ այն դեպքում, երբ սնունդը հոգում է քաղաքապետարանը: Ի դեպ, այստեղ բացահայտ անընդունելի վերաբերմունք ունեն հաստատվողների հանդեպ: Այդ հյուրանոցի հետ կապված խնդիրներին համայնքապետարանը տեղյակ է: Այդտեղ գտնվող մարդկանց կարիք կա հնարավորինս արագ վերատեղավորել:

1.2 Մննդապահովման հարցը կենտրոնացված եղանակով իրականացվում էր միայն Ջերմուկ համայնքում, որոշակի աջակցություն տրամադրվել էր նաև Վայքում (համայնքապետարանի ջանքերով բարերար էր գտնվել, սակայն կարճ ժամանակահատվածի համար, արդեն լրանում էր ժամկետը): Մյուս բոլոր դեպքերում, հիմնական ծանրաբեռնվածությունը ընկած էր հյուրընկալող կառույցի վրա, որը ծախսերը հոգում էր անձնական կապերի միջոցով: Համայնքապետարանները առավել հակված էին աջակցությունը տրամադրել այն ընտանիքներին, որոնք կացարան են գտել առանձին ընտանիքներում, քան կենտրոնացված տեղակայումներին:

Մննդի կազմակերպման տեսանկյունից, առկա են խնդիրներ կապված մանկական կերերի հետ, քանի որ տրամադրվող փաթեթները ստանդարտ չոր սնունդ են ենթադրում:

1.3 Հիգիենայի պարագաներ և մաքրող միջոցներ. Մեծ ապաստարաններում հիգիենայի պարագաների շարունակական տրամադրման խնդիր կա, քանի որ հիմնականում կացարաններն արդեն իսկ սպառել են իրենց ռեզերվները: Հաշվի առնելով համաճարակային իրավիճակը, հատկապես մաքրող, ախտահանող միջոցների հարցը շատ տեղերում մնում է խնդրահարույց:

Դեռևս խնդրահարույց են մնում և հատվածային են իրականացվում այնպիսի պարագաների տրամադրումը, ինչպիսին են նորածին երեխաների, խնամքի կարիք ունեցող մեծահասակների խնամքի պարագաները, կանանց հիգիենիկ պարագաները:

1.4 Ջեռուցման խնդիր. Կացարանների հիմնական մասը տեղակայված են այն աշխարհագրական վայրերում, որտեղ կլիման խիստ է և արդեն իսկ անհրաժեշտություն կա լրացուցիչ ջեռուցում ապահովելու, կամ հոգալու որոշակի ծախսեր, մասնավորապես վառելիքի, էլեկտրաէներգիայի ու գազի: Ըստ կացարանների մենեջերների, շահույթ չստանալու և հյուրանոցի ամբողջ պոտենցիալը (հիմնականում բոլոր սենյակները զբաղված են) արցախցի ընտանիքների ապաստանմանը ծառայեցնելու պատճառով նշանակալի ծախսային բեռ են կուտակում և ջեռուցման համար պարզապես միջոցներ չունեն:

Ջեռուցման խնդիրը առկա է նաև առանձին տներում տեղավորված ընտանիքների համար, ովքեր կարիք ունեն ջեռուցման սարքերի կամ էլ կոմունալ ծախսերի փոխհատուցման:

Հնարավոր լուծում. Ըստ երևույթին, կոմունալ ծախսերի մասով կանոնակարգված աջակցություն ստանալու պարագայում, հյուրանոցները կկարողանան ավելի երկար ապաստանել ընտանիքներին: Իսկ հիգիենայի պարագաների, մաքրող միջոցների և սննդի տրամադրման մասով կարելի է դիտարկել հումանիտար օգնության տրամադրումը՝ կենտրոնացված ձևով՝ ՏԻՄ-ի համակարգման ներքո (օրինակ կարելի է դիտարկել Ջերմուկ համայնքի փորձը): Այս առնչությամբ, անհրաժեշտ է օգնող կառույցների/անհատների աջակցությունը կոնսուլիդացնել և նպատակաուղղել այդ հարցերին, որպեսզի ռեսուրսները արդյունավետ օգտագործվեն: Մի կողմից լավ է, որ շատ են օգնող նախաձեռնությունները, բայց ժամանակն է, որ ավելի կանոնակարգված ձևով արվի՝ խնայողաբար առաջ գնալու համար:

Հնարավոր լուծում. Այս դեպքում պետք է դիտարկել առնվազն անձնակազմի համար նվազագույն աշխատավարձի փոխհատուցման հարցը:

1.5 Անկողնային պարագաների հետ կապված հարցերը. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանիքների մի մասը տեղափոխման արդյունքում տեղավորվել են կացության համար ի սկզբանե չնախատեսված կացարաններում կամ երկար ժամանակ չբնակեցված կացարաններում, հանդիպում են նաև ծածկոցների, սպիտակեղենի և սրբիչների կարիքներ: Սա կիրառելի է ինչպես կացարաններում, այնպես էլ տներում տեղավորված ընտանիքների համար: Նման ընտանիքները կազմում են ուսումնասիրված ընտանիքների մոտ 15%-ի համար:

1.6 Կենցաղային տեխնիկայի հետ կապված հարցերը. Ինչպես անկողնային պարագաների դեպքում, այստեղ նույնպես նույն հիմքով՝ կացարանների բնակեցված չլինելու, առկա է կենցաղային տեխնիկայի կարիք՝ արդուկ, լվացքի մեքենա, սառնարան, տաքացուցիչներ և այլն: Այս կարիքները նույնպես կազմում են ուսումնասիրված ընտանիքների մոտ 10%-ը:

1.7 Կացարանների անձնակազմի ներգրավման հարցը. Կապված այս իրողությունների հետ, անհրաժեշտություն է առաջացել ներգրավել կացարանների անձնակազմը աշխատանքներում, թեև հյուրանոցները շահույթ չեն ստանում: Օրինակ, Ծաղկաձորի, Ջերմուկի, Աղվերանի, Սևանի պարագայում, մեծամասամբ պլանավորված էր գործունեությունը դադարեցնել 01.10.2020 թ. դրությամբ: Աշխատողների վճարման հարցում նույնպես հյուրանոցները դժվարանում էին և անհանգիստ էին նրանց հնարավոր դժգոհությունների հետ կապված:

1.8 Կազմակերպչական հարցեր-տեղեկատվության ապահովում

Այսպես, կենսաթոշակների և սոցիալական աջակցության նպաստների առնչությամբ որոշ վայրերում, օրինակ Վայքում, անձը հաստատող փաստաթղթերի բացակայության դեպքում՝ տեղեկանքի տրամադրման վերաբերյալ հրահանգը տարմենկնաբանությունների առիթ է հանդիսացել:

Ծագած հարցեր.

- Արդյո՞ք հնարավոր է կենսաթոշակների վճարումը կազմակերպել կացարանում, եթե տվյալ անձը ունի տեղաշարժման խնդիր:

- Եթե անձը պետք է անցներ բժշկասոցիալական փորձաքննություն, սակայն իրավիճակով պայմանավորված դա հնարավոր չի եղել. ի՞նչ անհրաժեշտ քայլեր պետք է ձեռնարկվեն:
- Ի՞նչ է պետք անել այն դեպքերում, երբ տվյալ անձի անունը չկա գրանցված սոցիալական աջակցության նպաստների ցանկում, սակայն նա նպաստառու է:

1.9 Կրթության հարցը. Արցախից տեղափոխված երեխաների կրթության իրավունքի իրացման վերաբերյալ իրավական կարգավորումները, բարեբախտաբար, բավականին արագ և ժամանակին լուծում ստացան, ինչը թույլ տվեց խուսափել տարատեսակ բյուրոկրատական խնդիրներից: Ընդ որում, պրոցեսում ներգրավվեցին ինչպես պետական, այնպես էլ մասնավոր դպրոցները: Միևնույն ժամանակ, այնուամենայնիվ, այս հարցը նույնպես ամբողջական լուծում չստացավ, պայմանավորված հիմնականում կազմակերպատեխնիկական հարցերով: Մասնավորապես, այդ գործոնները ներառել են.

- Սկզբնական շրջանում ծնողներն իրենք էին մերժում մասնակցությունը դասերին, ասելով, որ «պատերազմը շուտով կավարտվի», հետևաբար երեխաներին կարիք չկա լրացուցիչ սթրեսի ենթարկել՝ ուղարկելով նոր դպրոց, նոր միջավայր:
- Դպրոց կանոնավոր հաճախելու ընթացքում, երեխաների մի մասը ապաստանված են եղել կացարաններում, որոնք տեղակայված են եղել բնակելի տարածություններից հեռու վայրերում և ոչ բոլոր տեղերում է հաջողվել ապահովել երեխաների տեղափոխումը կրթական հաստատություն:
- Հեռավար կրթության փուլում, Արցախից երեխաների զգալի մասը, ովքեր արդեն իսկ հաճախում էին դպրոց կրկին դուրս են մնացել գործընթացից, հիմնականում տեխնիկական միջոցների բացակայությամբ պայմանավորված, իսկ արդեն այդ փուլում ժամանած երեխաները, ընդհանրապես չեն ընդգրկվել կրթական գործընթացում:

Ստացվում է, որ մոտավոր հաշվարկներով, կրթական գործընթացին կանոնավոր կերպով մասնակցել է տեղափոխված երեխաների միայն մինչև 10-15%-ը:

1.9.1 Այն դեպքերում, երբ ընտանիքները տեղավորված են ճամբարներում, դպրոց հաճախելու դեպքում տեղափոխման խնդիր կա, քանի որ մոտակա դպրոցները գտնվում են այնպիսի հեռավորության վրա, որ հնարավոր չէ անցնել ոտքով:

Հնարավոր լուծում. Մի քանի հնարավոր տարբերակներ կան՝ (1) աջակցել հյուրընկալող կողմին կազմակերպելու երեխաների տեղափոխումը, օրինակ տրամադրելով փոխադրամիջոց/վառելիք, (2) աջակցել դպրոցին՝ կազմակերպելու երեխաների տեղափոխումը, (3) աջակցել ընտանիքներին, որոնք ունեն մեքենաներ՝ կազմակերպելու տեղափոխումը՝ հյուրանոցների/ճամբարների ղեկավարության համակարգմամբ:

1.9.2 Անհրաժեշտություն կա հասկանալ հնարավոր միջոցները այն դեպքերում, երբ տնային ուսուցման կարիք ունեցող երեխա կա (նշված համախմբությունում 3-4 դեպք է հանդիպել): Ի դեպ, Ասոցիացիան դիմել է համապատասխան կրթության բաժիններին:

1.10 Առողջապահության հարցը.

1.10.1 Բավականին մեծ է պարբերաբար դեղորայք օգտագործող անձանց թիվը՝ հատկապես տարեց բնակչության շրջանում: Պետության միջամտության արդյունքում, հաջողվել է որոշակիորեն կարգավորել դեղորայքի տրամադրման հարցերը,

բացառությամբ այն դեպքերի, երբ կարիք կա թանկարժեք և ՀՀ ԱՆ կողմից սահմանված դեղորայքի ցանկում չներառված դեղորայքի: Ներկա պահին, նման դեղորայքի ձեռքբերման համար օգտագործվում են տարբեր հասարակական կազմակերպությունների ռեսուրսները, սակայն կանխատեսելի չէ, թե որքան այդ ռեսուրսները հասանելի կլինեն: Փաստացի, ուսումնասիրված բնակչության շրջանում առնվազն 1/5-ը ունեցել են դեղորայքի կարիք:

1.10.2 Շտապ բուժօգնության դեպքերի պարագայում կազմակերպվել է տեղափոխումը բուժսպասարկման ՀՀ, հիմնական ծանրաբեռնվածությունը դնելով պոլիկլինիկաների վրա, որոնք կարող են անհրաժեշտության դեպքում հիվանդների ուղեգրել ստացիոնար բուժօգնության: Ներկա պահին այս ուղղությամբ աշխատանքների տեսանկյունից, դեռևս խնդիրներ չեն հանդիպել:

2. Ապաստանված ընտանիքներին մասնագիտական շարունակական աջակցության տրամադրմանն առնչվող հարցեր

2.1 Սոցիալական աշխատանքի ծառայություններ. Կացարաններում անհրաժեշտություն կա սոցիալական ծառայությունների տրամադրման, որոնք կներառեն, առնվազն խորհրդատվություն փաստաթղթերի, սոցիալական աջակցության տրամադրման, ուղղորդումների իրականացման, կացարանում ներքին կյանքի կազմակերպման, բնակիչների՝ իրենց հետ կապված առօրյա հոգսերի հոգալու գործընթացներում ներգրավելու, այդ մասնակցությունը խթանելուն ուղղված խմբային աշխատանքների (փոխօգնության, ուսուցողական, և այլն) իրականացման մասերով (ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների հետ):

Ներկա փուլում, փորձը ցույց է տալիս, որ նման աշխատանքները կրում են սպոնտան բնույթ, և սահմանափակվում են մեկանգամյա այցերով, այնինչ, արդեն իսկ նկատվում է առավել համակարգված և որոշակի տևողությամբ մասնագիտական միջամտության կարիք: Բազմաթիվ կամավորներ են այցելում, օգնություն տանում, սակայն արդեն ժամանակն է դրանք կանոնակարգել՝ վերածածկերից խուսափելու համար:

Հնարավոր լուծում. Նպատակահարմար է, յուրաքանչյուր կացարանին կցել կոնկրետ կազմակերպության մասնագիտական ներուժը՝ առնվազն երկու սոցիալական աշխատողով: Վերջիններս պատասխանատու կլինեն տվյալ կացարանում առկա դեպքերի հետ աշխատանքի համար՝ սկզբից մինչև վերջ: Ընդ որում, անհրաժեշտություն կլինի, կազմել մասնագիտական թիմ, որտեղ նշված երկու սոցիալական աշխատողներին կմիանան նաև ՄՍՏԲ/Գ 1-ական դեպք վարող և 1 համայնքային սոցիալական աշխատող (եթե առկա է տվյալ համայնքում):

2.2 Շարունակական հոգեբանական աջակցություն. Ընտանիքների հետ հանդիպումները ցույց տվեցին, որ կանոնավոր հոգեբանական աջակցության կարիք կա՝ ի լրումն առաջնային ճգնաժամային իրավիճակի մեղմացման: Ի դեպ, կան ընտանիքներ, ովքեր առաջին փուլում հրաժարվել են աջակցությունից, սակայն նոր-նոր սկսում են զգալ նման աջակցության կարիքը: Քանի գնում կանոնավոր տիպի աջակցության կարիքը ավելի շատ է զգացվում՝ կապված ընտանիքի անդամի, հարազատի կորստի, վիրավոր հարազատ

ունենալու հետ, ինչպես նաև տազնապներ ու անհանգստություններ կապված բնակարանների կորստի, բնակավայրերի ավերածության, անորոշության, նոր վայրում հարմարվելու, երեխաների ապագայի և այլ հարցերի հետ: *Ըստ այդմ, ներկա պահին նման ծառայությունների պահանջարկն ու առաջարկը հավասարակշռելու անհրաժեշտություն կա:*

Հնարավոր լուծում. Ցանկալի կլինի ունենալ կցված հոգեբաններ յուրաքանչյուր կացարանին: Մեկանգամյա կամ կարճատև զրույցները/թերապիաները այլևս էֆեկտիվ չեն: Ի դեպ, ոչ միայն ապաստանված անձանց, այլ նաև հյուրընկալողների համար կարիք կա մասնագիտական աջակցության, օրինակ՝ խմբային ձևաչափով, ինչը կօգնի հնարավորինս առողջ պահել փոխհարաբերությունները և մթնոլորտը ապաստարաններում:

2.3 Ընդհանուր զբաղվածության ապահովում և կացարանի ներքին կյանքի կազմակերպում.

Առաջնային գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ անհրաժեշտություն կա կացարաններում ինչպես երեխաների, այնպես էլ դեռահասների և մեծահասակների համար օրվա ընթացքում զբաղվածություն ապահովելու, ինչպես նաև կացարանի ներքին կյանքի կազմակերպման գործընթացին մասնակից դարձնելու: Կացարանների իրավիճակի դիտարկումը թույլ է տալիս ասել, որ առավել դրական է մթնոլորտը այն վայրերում, որտեղ ապաստանված անձինք ներգրավված են կացարանում կյանքի կազմակերպման բոլոր փուլերին՝ ռեսուրսների հայհայթումից ու մոբիլիզացումից, մինչև ընդհանուր տարածքի մաքրումը, սննդի պատրաստումը, երեխաների խնամքի ու կրթության հարցերի կազմակերպումը, այդ թվում երեխաների համար անկյունի ստեղծումը, տարեցների խնամքի հարցի լուծումը: Այսինքն, կյանքի կազմակերպումը համակեցության կանոններով:

Հակառակ պարագայում, օրվա ընթացքում զբաղվածություն չունենալը խորացնում է անցանկալի տրամադրություններն ու վարքաձևերը: Սա առավել արտահայտվում է հարմարեցված կացարանների պարագայում, որտեղ ի լրումն ներքին կյանքում ապաստանվածների խիստ սահմանափակ ներգրավվածությանը, բացակայում են նաև երեխաների, տարեցների համար անկյունները, այդ թվում խաղասենյակները¹, ընդհանուր տարածքները և այլն:

Հնարավոր լուծում. Ինքնօգնության խմբերի և այլ ձևաչափերով կարելի է բնակատեղիի տարածքում կազմակերպել կյանքն ու առօրյան, օրինակ՝ երեխաների/դեռահասների զբաղմունքի անկյուն, մտազբաղեցնող և խթանող վարժանքներ, մշակութային բնույթի միջոցառումներ և այլն՝ լավ պատրաստված երիտասարդական աշխատակիցների և մենթորների միջոցով. նման աշխատուժ ունեն մի շարք հկ-ներ, օրինակ՝ Կազա հիմնադրամ, Գյումրիի երիտասարդական կենտրոն, ՀՕՖ-ի երեխաների կենտրոն և այլն:

¹ Կան դեպքեր, երբ երեխաներին տրվել են գրքեր, խաղալիքներ, սակայն կացարանում չկա տարածք, որտեղ հնարավոր է դրանք օգտագործել, տարածքը ներառում է միայն ննջասենյակներ կամ խաղալիքները բաշխելիս ոչ միշտ է հաշվի առնվել երեխաների տարիքային կազմը և այլն:

3. Կամավորների և սոցիալական ոլորտի աշխատուժի հետ կապված հարցեր

3.1 Մասնագետների համար «ուղղորդումների անկյուն» ձևավորման անհրաժեշտություն.

Հաշվի առնելով, ռազմական դրության պայմաններում առկա կարգավորումներում իրականացվող արագ փոփոխություններն և իրավիճակից բխող որոշումների կայացումը, երբեմն թարմացված տեղեկատվությանը տիրապետելու խնդիր է նկատվում տեղում գործող մասնագետների շրջանում:

Հնարավոր լուծում. Այս համատեքստում կարիք կա, մասնագետների համար ընդհանուր ինֆորմացիոն հարթակի ձևավորման՝ հենց սոցիալական ծառայություններին վերաբերող հարցերի առնչությամբ, որի դերում կարող է հանդես գալ ԱՍՀՆ պաշտոնական ֆեյսբուքյան էջը, սակայն հնարավոր է նաև կից խմբի ստեղծում, որտեղ մասնագետները հնարավորություն կունենան լրացուցիչ ինֆորմացիայով կիսվելու, ինչպես նաև արագ հարց ու պատասխանի:

3.2 Մասնագետների համար աջակցող մեխանիզմների ստեղծման անհրաժեշտություն.

Արդեն իսկ մասնագետների մոտ նկատվում են մասնագիտական հյուսվածության նշաններ, ինչը կարող է իրավիճակի երկարաձգման արդյունքում էական խոչընդոտներ ստեղծել ընտանիքների հետ աշխատանքի կազմակերպման տեսանկյունից:

Հնարավոր լուծում. Այս համատեքստում, ցանկալի կլինի նախատեսել կանոնավոր բնույթ ունեցող՝ մասնագիտական ինքնախնամքի, սուպերվիզիայի, ինչպես նաև կարճատև, օրինակ՝ կարճատև, արագ վերապատրաստումների հնարավորություն դաշտում աշխատող մասնագետների համար: Սա թույլ կտա երաշխավորել հնարավոր խնդրահարույց իրավիճակների վաղ բացահայտումն ու դրանց արձագանքելը: Ի դեպ, այս հարցում Ասոցիացիան պատրաստակամություն է հայտնում ներդնելու իր ողջ մասնագիտական ներուժն ու ռեսուրսները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԿԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1.	Երևան	Ծարավ Աղբյուր	ԵՊՀ ուսանողական հանրակացարան
2.	Երևան	Կենտրոն, Սայաթ-Նովա փող.	Նովա հյուրանոց
3.	Երևան	Ավան, Ա. Խաչատրյան թաղ. 4-րդ փող տ. 11	Արաքս
4.	Երևան	Էրեբունի	Նուբարաշենի Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն (2 այց է կատարվել)
5.	Երևան	Զրվեժ, Թևոսյան 107/6	Նախկին Բազալտի գործարանի ադմինիստրատիվ շենք
6.	Երևան	Արաբկիր	DDD
7.	Երևան	Աջափնյակ, Սիլիկյան թաղամաս	Թերջյան հյուրատուն
8.	Երևան	Ադմիրալ Իսակովի 26	Ուրարտու հյուրատուն
9.	Տավուշ	Դիլիջան	Կենտրոնական բանկի հյուրատուն
10.	Տավուշ	Դիլիջան	Էկո Կայան
11.	Գեղարքունիք	Սևան	Սևանի ԿԲ
12.	Գեղարքունիք	Սևան	Երֆի հանգստյան գոտի
13.	Գեղարքունիք	Սևան	Նոյ լենդ
14.	Սյունիք	Միսիան	Բասեն
15.	Սյունիք	Միսիան	Դինա
16.	Վայոց Ձոր	Զերմուկ	Անուշ
17.	Վայոց Ձոր	Զերմուկ	Եվմարի
18.	Վայոց Ձոր	Զերմուկ	Օլիմպիա
19.	Վայոց Ձոր	Զերմուկ	Արարատ
20.	Վայոց Ձոր	Զերմուկ	Լեչկամիսիա
21.	Վայոց Ձոր	Վայք	Ամրոց
22.	Վայոց Ձոր	Վայք	Լիդեր
23.	Վայոց Ձոր	Վայք	Վայք
24.	Վայոց Ձոր	Եղեգնաձոր	Նատալի հյուրատուն
25.	Վայոց Ձոր	Եղեգնաձոր	Սիրանուշ Ճամբար
26.	Վայոց Ձոր	Եղեգնաձոր	Արևի հյուրանոց
27.	Կոտայք	Ծաղկաձոր	Ռոսիա
28.	Կոտայք	Ծաղկաձոր	Ալիք հանգստյան տուն
29.	Կոտայք	Աբովյան	Ավետարանական եկեղեցու հյուրատուն
30.	Կոտայք	Աբովյան	«Էյ Դի Էմ ԴԱՅՄՈՆԴՄ» ընկերության կողմից տրամադրված կացարան

31.	Կոտայք	Աբովյան	Հին Փարվանա հյուրանոց
32.	Կոտայք	Աղվերան	Արթուրս ռեզորթ
33.	Կոտայք	Աղվերան	Պարկ ռեզորթ
34.	Կոտայք	Քասախ	«Ուռենի» հյուրատուն
35.	Կոտայք	Աբովյան	Նարեկ հյուրանոց